ՆՈՐ-ԴԱՐ

№ 167 ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի 31 Հոկտեմբերի 1890 Չորեքշաբթի 31 Հոկտեմբերի ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 167

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., Հասարակ 5 կոպեկ։
Բաժանորդ գրուում են Թիֆլիսում միևնոյն խմբագրատանը։

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Ցայտնագրութիւնները ընդունուում են ամեն ժամերով։
Ցայտարարութիւնների բաժին 2 կ., իրկամների համար կրկնապատիկ

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1891 թուի յունուարի 1-ից, համաձայն Քաղաքային Խորհրդի սոյն հոկտեմբերի 29-ի որոշման և ջուր բաժանելուն վերաբերեալ ներկայ կանոնների 17-րդ յօդուածի զօրութեամբ, քաղաքային ջրմուղուց ջուր բաժանելու գնելի նկատմամբ՝ զօրութեան մէջ են մտնում հետևեալ լրացումն և փոփոխութիւնները.

Ա. ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՋՈՒՐ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՁԻՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

1) Ոչ աւել, քան 25 խորանարդ սաժէն տարածութիւն ունեցող ծաղկանոցների և պարտէզների մի խորանարդ սաժէնը ջրելու համար առնուում է—30 կոպ.։

2) Ոչ աւել, քան 25 խորանարդ սաժէն տարածութիւն ունեցող ծաղկանոցներն և պարտէզները թոյլ է տրուում ջրել 30 կոպեկով իւրաքանչիւր խորանարդ սաժէնը. իսկ մեծ տարածութիւն ունեցող այգիները կարող են ջրել ոչ այլ կերպով, եթէ ոչ ջրաչափով։

3) Սենեակներում գործ ածելիք ջրի որոշելու քանակութիւնից աւելի գործածելուն համար իւրաքանչիւր դոլլից առնուում է ¼ կոպ.։

Բ. ՉՐԱՉԱՓԻ ՁԻՒՂԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

1) Մի ջրաչափով բաժանուող ջրի գինն իւրաքանչիւր դոլլի համար ⅓ կոպեկ որոշուում

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ֆրանկոն. — Լուրեր։
Թղթակցութիւններ. — Ախալցխայից.
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Երևելիների հեռագիրներ։
Տեղական։
Ցայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ինչպէս յիշատակում ենք Թիֆլիսում ստացած տեղեկութիւններից, կիրակի, հոկտեմբերի 28-ի գիշերը միայն Թիֆլիսում չէ եղել երկրաշարժ, այլ և Դիլիջանում և Երևանում։

—

Պետերբուրգում մի առանձին ընկերութիւն է կազմակերպւում, նպատակ ունենալով Կովկասում, գլխաւորապէս Սև ծովի ափերում տղեր ձեռք բերել, որտեղ, ինչպէս արդէն փորձը ցոյց է տուել, աշխողութեամբ կարելի է թէյի անկարաններ պահել։ Նախ և առաջ ընկերութիւնը մտադիր է մի քանի անձներ ուղարկել Չինաստան թէյի արդիւնաբերութիւնն իւր տեղում մանրամասնապէս ուսումնասիրելու համար. այդ անձերին էլ, մայրաքաղաքի թերթերի տեղով կը յանձնուի Կովկասում թէյի անկարաններ չունեցող։

—

Կառավարութեան յանձնարարութեամբ Կուբանի չրջանում մանրամասն հետազոտութիւններ կատարելով, տեսել են, որ Կուբան գետի բերանի Կովկասեան լեռների արևմտեան ճիւղերի միջև եղած ցած ճահճային տեղերը մոլեխի մի առատ բոյս են կազմում, որ զարմանալի արագութեամբ բազմանում է մոլեխը և այդ տեղերից թոչում է հարևան տեղերն իւր աւերմունքները կատարելու համար։ Այդ նկատմամբ, մայրաքաղաքի թերթերի տեղով, միտք է յղացել յիշեալ ճահճային տեղերը ցամաքեցնելու։ Այդ բանի համար առաջիկայ 1891 թուի գարնանը յիշեալ տեղերը մի արշաւախումբ կ'ուղարկուի։

—

Թեմիս առաջնորդ Սրբազան Մամբրէ Եպիսկոպոսը երէկ-ալէհի, հոկտ. 30-ին, առաւօտեան գնացքով Էջմիածնից ժամանեց Թիֆլիս։

—

Բախչիսարայի մօտերը, անտառի մէջ, մօտերքս Սիմֆերապոլի գիմնազիոնի տեսուչ Գ. Ի. Տիմոչևսկին հին գերեզմանների նշանակներ է գտել, այն գերեզմանների նման, որոնք գտնւում են հին Խերսոնէսի և Նէապօլի մօտերքը Սիմֆերապոլի արուարձաններում։ Գ. Տիմոչևսկու կարծիքով այդ տեղերում, այն է Զուֆութ-Գալայի տեղում, գտնւում է յունաց ամենահին քաղաքներից մէկը՝ Խաոնը (Խարխա, Խարան), որտեղից երկուսը, այն է Խերսոնէսն և Նէապօլիսն արդէն գտնուած են։ Կարծիք կայ, ասում է «Крымъ» լրագիրը, որ այդ գիւտը գիտական առաջնակարգ նշանակութիւն կարող է ունենալ, մանաւանդ, եթէ ընդունենք, որ Խաոնն, այսպէս ասած, Կիրկոր (Զուֆութ-Գալայ) քաղաքի նախատիպն է հանդիսանում, և մեծ նշանակութիւն ունի Ղրիմի հին պատմութեան մէջ։

—

ՄՕԱՐԱ գիւղից (Սոխումի գաւառ). — Հոկտեմբերի 7-ին Գուգաւոր կոչուած տեղում հետևեալ դէպքը տեղի ունեցաւ. երկու աբխազ սրճարանում նստած թուղթ էին խաղում, բայց վերջը նրանց մէջ վէճ է բացւում և սկսում են իրար հետ կռուել. կռուի ժամանակ նրանցից մէկը դանակով մի քանի տեղից ծանր հարուածներ է հասցնում իր հակառակորդին. յանցաւորին իսկոյն և նմա բանտարկում են, իսկ վիրաւորածին տանում են բժշկի մօտ։

—Եաշարա կոչուած գիւղի վարդապետ Պետրոս Թիւլեանցը հոկտեմբերի 8-ին գնում է Սոխումի մօտ գտնուղ Զամբակ գիւղը և իջևանում է մի գիւղացու մօտ, որի տունը ծածկուած է լինում յարդով։ Այդ պիտերը յանկարծ այրւում է այդ տունը. այրւում է նոյնպէս գիւղացու տան մէջ եղած ամէն բանը և յիշեալ վարդապետի բոլոր դպեստները. բայց սրանցից, վկայում են այրելով տանտէրը և վարդապետը ձեռները. Տանտէրը և վարդապետը միայն դուրս փախչելով կարողանում են ազատուել կրակից։

—Թէպէտ սեպտեմբերի վերջերում մեզանում օդը փոխուեց և մի չարաթ չորեքշաբթի անձրևներ էին տեղում, բայց հոկտեմբերի 1-ից երկինքը պարզուեց և կատարեալ գարնանային եղանակներ է անում։

—

Մի չքաւոր և տկար հայ չուխեցի Աղաբեկ Աչուգեան անունով, որ ունի իր չքաւորութեան համար պաշտօնական վկայութիւններ, բոլորովին որբ և ապրուստի միջոցներից զուրկ լինելով, ինքնասպան է, թերևս միջոցով բարեմիտ մարդկանց, Բաղու գնալու միջոց տան իրեն. Բարեմիտ մարդիկ կարող են իրենց կամաւոր նպաստը յանձնել Ալիխանեանի մագազինում, որ գտնւում է Լօրիս-Մելիքեան փողոցում (պօստատան մօտ), Մաբրիանի գնդատան դիմացը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԽԱԼՑԽԱ, 26 հոկտեմբերի.—Կար ժամանակ, որ Թատրոնի վրայ գաւառական քաղաքներում նայում էին այն աչքով, ինչ աչքով այժմ պիւֆերում նայում են «Վարագուղի» վրայ, որի մէջ բացի անմիտ զուարճութիւնից, ուրիշ ոչինչ չկայ։ Ի տարբեր, ժամանակի հետ փոխուեց և Թատրոնի վրայ ունեցած զազափարը, հասկացողութիւնը. այն բանը, որին ժողովուրդը մի ժամանակ ծաղրում էր և վրան նայում արհամարհական աչքով, այսօր նայում է հանգրանքով և լրջօրէն։ Եւ այժմ ոչ թէ միայն քաղաքներում և առանձներում, այլ գիւղերում անգամ հասկացել է Թատրոնի նշանակութիւնը և բարերար ազդեցութիւնը։ Եւ այսօր ինչ ենք տեսնում. չատ նահանգական, նոյն իսկ գաւառական քաղաքներում աշխատում են Թատրոնի համար, ջանք են անում ունենալ առանձին բեմ և հնչացնել ներկայացման գործը, որի վրայ ժողովուրդը նայում է երկու օգտակար տեսակէտից—մէկը իբրև կրթիչ միջոց, միւսը իբրև աղբիւր զանազան բարեգործական հիմնարկութիւնների. այդպէս հասկացել է ժողովուրդը և այդպիսի արտով էլ նա այսօր յաճախում է Թատրոն. ուրեմն պարզ է, որ ամէն տեղ պէտք է աշխատել և առաջ տանել այդ բարձր գաղափարը և բարի ցանկութիւնը։

Ախալցխան իւր համար մինչև այսօր չէ ունեցել մշտական և հաստատուն բեմ, որտեղ կարողանային տեղական սիրողները կամքը ուզած, յարմար դէպքում կամ կարիք եղած ժամանակ ներկայացում տալ, և մինչև այսօր չատ քիչ է մտածած դրա մասին և այդ էլ իբրև մտածմունք ճնացել է մնացած։ Սիրողները պէտք եղած ժամանակ դիմել են նախկին կրուժօկին (այժմ հիւրանոց), որը ունէր իւր համար վարձու տալու բեմ, և այդտեղ տուել են իրենց ներկայացումները, որոնցից ստացուած օգուտի մի որոշ մասը և դրամի մասը տուել են վարձ։ Մի քանի տարուց յետոյ զանազան հանգամանքների պատճառով այդ բեմը վերցնում է ժողովարանի ակումբը, որը փոքրացնելով յարմարեցնում է իւր դահլիճի դիրքին. Առաջ ժողովարանում ներկայացումների թիւը սահմանափակած չէր, և տալիս էին այնքան ներկայացում՝ որքանի կարիք կար և սիրողների կազմից կարողութիւն. բայց այսօր, ինչպէս տեղեկացանք, այդ տեմաժանափակած է և վճռուած է Թոլստոյի միայն չորս ներկայացում ամբողջ սեզոնի համար։ Չորս ներկայացում (երկուսը հայոց, երկուսը ռուսաց)։ Իրաւ, երբ մարդ մտածում է, մի քիչ զարմանում է, քանի որ այստեղ միշտ եղած է 8—12 ներկայացում (հատն երկու ազգութեան) և մինչդեռ ժամանակի առաջ պիտի եղած լինէր ներկայացումների թիւը չատանայ, բայց այսօր մենք հակառակն ենք տեսնում։ Այստեղ ոչ որի չէ կարելի մեղադրել առանձին-առանձին, այլ ամենս միասին, Պարզենք մեր միտքը։

Ժողովարանի ակումբը պահել է ներկայացումների թիւը սահմանափակել չորսով նրա համար, որ իւրաքանչիւր անդամ, որ տալիս է այնտեղ տարեկան 10 րուբլի՝ անպատճառ ցանկանում է իւր զաւթումներից չզրկուել, ժամանակ նշանաւոր տօներին, երբ ընդհանրապէս տղին են տանում ներկայացումները։ Գուցէ ասեն չատերը, թէ մենք են զաւթումներից զրկում, քանի որ նոյն իսկ ներկայացումը կարող է լինել նրանց գլխաւոր զաւթումները։ Այդ այդպէս է. բայց այդ այն ժամանակ, երբ ժողովարանի բոլոր անդամները լինէին մի ազգից. բայց չէ որ հայերէն ներկայացումը ոչ ռուսը կ'հասկանայ, ոչ վրացին, իսկ վրացունը ոչ հայը և ոչ ռուսը և այլն. Թողնենք այն, որ հայ անդամներից չատերը զուցէ չեն ուզում ներկայացման գնալ, այլ ուզում են ուրիշ կերպ ժամանակ անցկացնել։ Եւ երբ կերպ ժամանակ անցկացնել։ Եւ այդպիսի հանգամանքը աչքի առաջ առնելով ակումբը վճռել է սահմանափակել ներկայացումների թիւը իւր զանձուն։ Բացի այն, որ մի կողմից մտածում ենք ժողովարանի անդամների պահանջին բաւականութիւն տալ, միւս կողմից էլ պէտք է մտածենք ժողովրդեան բարի ցանկութեան բաւականութիւն տալ. այսինքն միջոց մտածել, որ Ախալցխան ունենայ իւր աղատ և անկախ բեմը, ինչպէս չատ փոքրիկ գաւառական քաղաքներ ունին, և սրանով է բացատրւում ընդհանրութեան անփոփոխութիւնը, որ մինչ այսօր այդ իրողութեան վրայ լուրջ ուշադրութիւն չէ դարձուած, մինչդեռ, եթէ մինչև այսօր վարձի տուած փողերի կէսը ծախսէինք, կանոնաւոր բեմ կ'ունենայինք։

Չատերի մէջ մի տեսակ միտք է չորջում, թէ Եղիսաբէթեան դպրոցի դահլիճն ունի ներկայացման տեղ, բայց այդ ունի իւր հետևեալ անյարմարութիւնները. նախ՝ իբրև ներկայացման տեղ նա վատ է, երկրորդ՝ չինքը հին է և ոչ ամուր, երրորդ՝ իբրև ուսումնարան անյարմար է կրկնութիւնների և վարժութիւնների համար, որը դասերի ժամանակ մինչև ներկայացումը տեսնելու է 2-3 չարաթ։ Մեր առաջարկութիւնը այս է՝ կամ նորը հիմնելու մասին մտածել, կամ նախկին կրուժօկի տիրոջ հետ պայմանաւորուել և այնտեղ դահլիճը յարմարեցնել ընդ միչև ներկայացումների համար։ Իսկ եթէ մեր մտածածը դժուար է և անյարմար՝ թող մտածեն ուրիշ լաւը։

Ս. Փրկիչ եկեղեցու երէցփոխանական հարցը, որ երկու անգից իւիր մինչև օրս ընդհանուրի մտածման առարկան էր՝ այսօր արդէն կատարուած ենք տեսնում. Պ. Ց. Եղանեանցը իւր աչխատասէր և արդիւնաւոր հոգաբարձական պաշտօնը՝ իւր ընտանեկան գործերի պատճառով տուիրատած էր թողնել։ Նրա հրաժարումից մօտ երկու ամիս յետոյ, այս ամիս սկզբին ընտրուեցին 30 ձայնատուներ, որոնք հոկտեմբերի 22-ին ընտրեցին նոր երէցփոխ։

Այն գազափարը, թէ ով կ'լինի երէցփոխ, թող լինի, այդ միևնոյն է, նշանակութիւն չունի՝ Մաթէոսն է, Թադէոսը, միայն թէ իւր պաշտօնը կատարի բարեխղճութեամբ—այնքան էլ ճիշտ չէ. ներեցէք, թէ Մաթէոսը չատ բարեխիղճ և անձնանուէր մարդ է, և բոլորս նրա վրայ վստահ ենք, բայց այդ Մաթէոսը իւր, մինչև անգամ, անձնանուիրութեան հետ չունի այն նուրբ հասկացողութիւնը, այն զարգացումը, որը դէպ խառը օժտուածն է բարեխղճութեան և գործելու՝ նա իւր լիակ բարեխղճութեամբ ինչ կարող է անել. այն ժամանակ կլինի արդէն աչխատանք. բայց եթէ այդ Մաթէոսը ունենար իւր բարեխղճութեան հետ և զարգացում, այն ժամանակ-«дѣло мастера боится». Ասելացնենք սրա վրայ, որ երէցփոխը բացի իւր եկեղեցական պարտաւորութիւնից, որոնք են ժամագնացութիւնը, կրպակների և կառատրների գործը և այլն պէտք է լինի և հոգաբարձութեան անդամ տեղական ուսումնարանին. տրեմն և պէտք է հասկացողութիւն և պաչար ունենայ իւր այդ երկու պարտականութիւնների համար. եթէ ոչ՝ լինել միայն երէցփոխ և միւսած հոգաբարձու՝ այդ էլ կապկ չարժէ։ Չմոռանանք ասել, որ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու կայքերն և հողերը մի հմուտ կառավարչի պէտք ունին։

Մինչև հիմա էլ, ինչպէս յայտնի է, երէցփոխ ընտրում են ասելի հին մարդկանցից, որոնք իրենց հին ապրն են ածում, և նոքերը եթէ չեն խուսափում, դուէ ժողովրդից չեն էլ ընտրում. բայց այսօր ուրախութեամբ տեսնում ենք, որ թէ ժողովուրդն է հասկացել գործօն մարդ ընտրելու նշանակութիւնը և թէ նորերը ցանկանում են ազգային-եկեղեցական գործերում մասնակցել, և այդ այսօր տեսնում ենք Ախալցխայում, որ ժողովուրդը առողջ դատողութեամբ յաջող ընտրութիւն է արել և ընտրել է պ. Տիգրան Տէր Մկրտչեանցին։

Չմոռանանք յիշել, որ ով էլ որ լինի երէցփոխ և որտեղ էլ լինի, ժողովուրդը սիրում է նրան քաղաքել սկզբից մինչև վերջը. բայց պարզ բան է, հասկացող և գործունեայ մարդն ընդհանուրի խաղաղութեան ուշադրութիւն չի դարձնիլ, և գործով վերջը իրեն գովելի կանէ. Ժողովրդի այդպիսի խաղաղութիւնը մինչև այսօր որ եղել են, տեղի թէ անտեղի, մենք մի կողմն ենք թողնում, միայն այն կասենք, որ եթէ հինը լաւ է, պէտք է օրինակ առնենք, իսկ եթէ վատ է՝ ձգենք. իսկ ժողովրդի բամբասանքը—морская волна։

Եղած են դէպքեր, երբ լսել ենք—եթէ ես լինէի երէցփոխ, բոլոր քահանաներին ուսի պէս դէմս կ'դուզացնէի. մենք կասենք, ուսի պէս դուզացնելու ոչինչ չկայ, և ոչ էլ ուսի պէս դուզալու, քանի որ մարդիկ այժմ այնքան են հասկացել, որ իրենց պարտքն ու իրաւունքը լաւ են ճանաչում. Իրրև մարդ նրանք կարող են լինել մարդ, իրրև պաչտօնակից՝ պաչտօնակից, և Աստուած չանէ, որ որ և է տեղի հոգևորականները լարուած լինին երէցփոխի դէմ, (որը հարկաւ նկատի չան պէտք է տեղի ունենայ), կամ երէցփոխը հոգևորականների դէմ, այն ժամանակ զործը չի լինիլ զործ, այլ մի տեսակ ապրոր։

Յով. Մալխաս.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ.—«Journ. des Débats»-ի թղթակիցն այս օրերս խօսակցութիւն է ունեցել Յունաստանի նոր պարլամեն-

մի մեծամասնության պարապմունք Վելիանիսի հետ։ Յիշեալ թղթակցի ասելով, Վելիանիսն ասաջուց համոզուած էր, որ ընտրութիւնների ժամանակ ինքը կը տանի յաղթանակը, որովհետև Տրիկուպիսին հենց իւր կողմնակիցներն էին վնասել, որոնք իրենց յանձնուած կառավարչական և ֆինանսական վարչական պաշտօնները մասամբ կատակցական և մասամբ չհասկիրական ձրդումներից դրդուած նկատելի կերպով ի չար էին գործ դնում։ Ներկայումս կառավարութեան գլխաւոր հոգացողութիւնն այն պէտք է լինի, որ Յունաստանի ներքին հանգստութիւնը կարգը վերականգնուի, զօրքը վերակազմուի և ֆինանսներն և ֆինանսական վարչութիւնը բարեփոխուի։ Յունաց պատրիարքի և Բ. Դրան միջև տեղի ունեցած ընդհարման'նկատմամբ Վելիանիսը նկատել է, որ ճգնաժամին այս կամ այն կերպ վճռուիլը կը լինի այն հանգամանքից, թէ մեծ պետութիւններն ինչպէս կը վերաբերուին բուլղարական խնդրին։ Սակ'ինչ վերաբերում է Յունաստանի և Բուլղարիայի միջև եղած յարաբերութիւններին և դրանց չհանրի կապին Բալկան թերակղզու վրայ, այդ խնդրում, Վելիանիսի կարծիքով, փոխադարձ դիջողութիւններ են հարկաւոր։ Բայց Յունաստանի համար ամենավտանգաւորը բուլղարների աչխարհաղրական ոտնձգութիւններն են։ Սակայն այդ մասին Յունաստանի և Բուլղարիայի միջև կարելի է հաւաձայնութիւն կայացնել և այդ հաւաձայնութիւնը մի ժամանակ անմիջական կերպով կը կայանայ դրանց միջև։ Ի միջի այլոց Վելիանիսը նախատել է Տրիկուպիսի մինիսարութիւնը նաև այն բանում, որ դա չափից դուրս անուշադրութիւն էր մատնել յունաց չհանրի Բալկան թերակղզու վրայ։

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԻՐԵՐ

—Հետաքրքիր կար, որ գրաֆ Գարաճանեն (բուլղարական նախկին իշխան Բաթտենբերգը) պատճառից գնդապետի աստիճանով աւստրիական զօրքի խոհական ծառայութեան մէջ է հաչուած։ Աւստրիական լրագրները այդ բանից եզրակացնում են, որ Ալէքսանդր Բատտենբերգը հրաժարուում է քաղաքական գործունէութիւնից և նորից բուլղարական իշխան լինելուց։

—Զանցնելական գաղնակցական խորհուրդը նոյեմբերի 1-ին Տեսոնից պատուիրանները է կոչելու Բերն՝ հաչուցնող կոնֆերենցիա կազմելու համար։

—Սոֆիայից հեռագրում են, որ բոլորովին սխալ է այն լուրը, թէ սինոդը մտադիր է կրօնական գրքերը եկեղեցական սլաւեանական շրջանից բուլղարենէն թարգմանել։

—Գերմանական լրագրների տեղով, արքունական քարոզիչ Շտեկերը հրաժարական է տալիս։

—Միացեալ-Նահանգների ամեն տեղերից հաղորդում են, որ ընտրութիւնների ժամանակ ամենաթարախանները յաղթող են հանդիսանում։ Օհիոյից ստացուած վերջին անկախութիւններից երեւում է, որ Մակ-Կինլի անկասկած անհնարին է։ Նիւ-Յորքում էլ ճոխների մեծամասնութիւնը ամենաթարախաններին են տացել։

—Սերբական կառավարութիւնն Աւստրիային առաջարկել է պատգամաւորներ նշանակել՝ առևտրական նոր դաշնագրի վերաբերմամբ բանակցութիւններ անելու համար։

—«Post»-ի տեղով, պրուսաց ֆինանսների մինիստր գր. Միքելը մի նոր ծրագիր է կազմում ակցիաների վրայ հարկ դնելու մասին։

—Գերմանական լրագիրների տեղով, արքունական քարոզիչ Շտեկերը հրաժարական է տալիս։

—Միացեալ-Նահանգների ամեն տեղերից հաղորդում են, որ ընտրութիւնների ժամանակ ամենաթարախանները յաղթող են հանդիսանում։ Օհիոյից ստացուած վերջին անկախութիւններից երեւում է, որ Մակ-Կինլի անկասկած անհնարին է։ Նիւ-Յորքում էլ ճոխների մեծամասնութիւնը ամենաթարախաններին են տացել։

—«New-York Herald»-ին Մոնրէալից հաղորդում են, որ Պարիզեան գրաֆը երկաթուղու վագոնից միան անցնելու ատ սահել է և քիչ է մնացել, որ գնացքի տակն ընկնի։

—Օրլեանի եպիսկոպոսը մի շրջաբերական է ուղարկել սեմինարիաններին, որի մէջ բողոքում է այն «պրոպարտութեան» դէմ, որ իբր թէ հոգևորականութիւնը թշնամաբար է վերաբերուս օրէնքին և բոլոր ուժերով աշխատում է պատերազմի վտանգից խուսափել։ Եպիսկոպոսը յայտնում է, որ Լևոն XIII-ի կարծիքով, եկեղեցին գործ չունի կառավարութեան եղանակի հետ և նրա բոլոր հոգացողութիւնը հայրենիքի բարօրութեան համար է միայն։

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Խէչոփոնէրի ներքոյացուած—Բերլինի խեչագրների հիւանդացման համար հոգեկան հիւանդների համար միներկայացում տրուեց։ Դերի կատարողներն իրենք խեչագրներն էին։ Նրանցից մի քանիսն նուէրներ ստացան։ Ներկայացումից յետոյ դերասաններին ընթրիք տրուեց։

Թագուհի Նինա-Ռոչի փորձ։ Մօտերքս մի ինքնուրոյն գործ էր քննւում Չիկագոյի նահանգական դատարանում։ Բնակիչներից մինն իր կայքը վաճառեց 93 հազար րուբլով և, բացի պայմանը կատարելուց, չկարողանալով միւս ձեռնարկութիւնները կատարել, մնաւոր կայքի գինն օր օրի վրայ աւելանում էր, և գնողը գործը նրա ժառանգների հետ պէտք է վերջացներ։ Հենց այստեղ էլ գործը բարդուեց զանազան ձեռնարկութիւններով, որ պահանջում է Իլլինոյսի նահանգի օրէնքը։ Բանից երեւաց, որ հանդուցեալի ժառանգը դեռ ևս չծնուած երեխայ է։ Գնողն օգուտ քաղելով այդ հանգամանքից, չծնուած երեխայի դէմ բողոք ներկայացրեց։ Բայց այստեղ դարձեալ նոր դժուարութիւններ ներկայացան, որովհետև չկին կարող նշանակել չծնուած ժառանգի ոչ անունը, ոչ սեռը։ Բայց հակառակ այս գնողին մի այնպիսի վճռաւոր պատասխան, որին աւելի հետաքրքրում էր այդ կոմիքական դործի ձեռնարկութիւնը, քան խորհուրդ տուեց ստացած վճռներն առնել կայքի հանդուցեալ տիրոջից՝ պայմանագիրը խանգարելուն համար։ Այս բանից դարձեալ մի ուրիշ գործ է սկսուել, որտեղ մեղադրուողն արդէն ոչ թէ չծնուած երեխան է ներկայանում, այլ... մեռելը։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Հէ-սիոպային գործակալութենից)

—

ԲԵՐԼԻՆ, 30 հոկտեմբերի.—Խոշոր հողատէրերի մի խումբ պատրաստուում է պրուսական սէյմին մի ուղերկութիւն անել, որ Աւստրիայի և Ռուսիայի վերաբերմամբ հացի և անասունների մաքսը չբարձրացուի և սահմանի վրայ անասնաբուժական - ոստիկանական միջոցները չվերացուին։ Յիշեալ խումբը գտնում է, որ Պրուսիայի գիւղատնտեսական դրութիւնը թոյլ չէ տալիս, որ այդպիսի արտօնութիւններ լինին։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՇՈՊԵՆԱՒԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

I Սև ծովի վրայ

Բաթումից գնում են՝

Երեքշաբթի օրերը, երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսիյսկի վրայով։

Չորեքշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսիյսկի վրայով։

Հինգշաբթի օրերը՝ առաւօտեան 8 ժամին, չորեքշաբթի գծով, բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաոչմանեան գծով, դէպի Կ. Պոլիս

Բաթում գալիս են

Երկուշաբթի օրերը՝ առաւօտեան ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտը, ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, չորեքշաբթի գծով։

Կիրակի օրերը՝ առաւօտը Կ. Պոլսից։

Ծանուցանէ. Ուղիղ գծով եկող այն նաւերը, որոնք վերադարձին մտնում են Սուխում և Նովոռոսիյսկ, Նովոռոսիյսկից դուրս կը գան երեկոյեան ժամը 1-ին, որպէս զի Նովոռոսիյսկի երկաթուղու գալուն յարմարին։

Փոթի գալիս են

Սուխումից՝ երեքշաբթի օրերը։

Բաթումից՝ հինգշաբթի, չորեքշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Փոթիից գնում են

Բաթում՝ հինգշաբթի օրերը։

Անասուօպօլ՝ ուրբաթ օրերը։

II Կասպից ծովի վրայ

Բագուից գնում են

Դերբէնդ, Պետրովսկ և Աստրախան՝ չորեքշաբթի, ուրբաթ և չաբաթ օրերը, ցերեկը ժամը 1-ին։

Ուզուն-Ադա՝ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5-ին։

Լէնքօրան, Ասթարա և Էնգէլի՝ երկուշաբթի օրերը, ցերեկը ժամը 1-ին։

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

I Անդրկովկասեան երկաթուղի

Գնացք թիւ 1-ին

Բաթումից, պատ. 11 ժ. 8 ր. եր.
Բագուից, » 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Գանձակից, » 8 ժ. 20 ր. եր.

Գնացք թիւ 2-րդ

Բաթում, պատահ. 8 ժ. 40 ր. առ.
Բագու, » 12 ժ. 8 ր. գիշ.
Բաթում, մար. ապ. գնաց. 3 ժ. 10 ր. ց.
Գանձակ, « 9 ժ. 45 ր. առ.

II Անդրկասպեան երկաթուղի

Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր.
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չաբաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։

I. Բօստով-Վլադիկաւկազի երկաթ.

Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ.
Բօստով գալիս է 8 ժ. 48 ր. առ.
Բօստովից գնում է 7 ժ. 28 ր. գեր.
Վլադիկաւկազ գալիս է 7 ժ. — ր. եր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„RIGOLLOT" ԹՒՂԹ
ԹԵՐԹԱՒՈՐ ՄԱՆԱՆԵԼ ՍՊԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ

Անհրաժեշտ է ընտանիքներում և ճանապարհորդների համար։

Ռուսիա ներմուծելը թոյլատրուած է պէտք է գործ ածել, երբ անհրաժեշտը լինի արիւնը մաքրելի մէջ և է մասում հատուկ։

Ամէն մի արկղիկի թերթի վրայ կայ կարմիր թանաքով. հետևեալ ստորագրութիւնը։



Կեղծ չէ միայն այն, որի վրայ կարմիր թանաքով այս ստորագրութիւնը կայ։

Գլխաւոր պահեստն է. 24, Aven. Victoria, Paris,.

Մեծ քանակի պահեստն է՝ Մոսկուա Վ.այվարկա, 48.

Ծախ. է Ռուս. բոլոր դեղատներում
(Մ) 26—22

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է աշակերտներին ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ գէմնազիա, ըհալական ուսումնարան, հոգեւոր էջ պոս և ներքինեան ուսումնարան։

Ուսումնարանում ընդունւում են ԵՐԹԵԻԵԿՆԵՐ, ԿԻՍԱԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ և ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐ,

Ընդունւում են նոյնպէս հաստլթաւորներ (пахлѣбники) բէալական ուսումնարանի և գիմնազիալի աշակերտներից։

Ուսումնարանում աւանդւում են ի մէջի այլոց և հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն լեզուները, դաշնամուրի վրայ ածել և այլն։

Հասցէն. Тифлисъ, Вельяминовская ул. № 11. (Сололаки).

(79) 20—11

BATEAUX VAPEUR FRANÇAIS A. PAQUET ET Cie.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ Ը՝ՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէյլից Բաթում երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, սկսած չորեքշաբթի, ապրիլի 4/16-ից և Բաթումից Մարսէյլ, մանելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս երկուշաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Հինգշաբթի 11/23 հոկտեմբերի չորեքշաբթի «Սիբկաի» կապիտան Բօչէլ
» 25 հոկտեմբերի 6/ նոյեմբերի » «Մինգրէլիա» » Ժիրաէն
» 8/20 նոյեմբերի » «Աստռալիա» » Գարրիգ
» 22 նոյեմբերի /4 դեկտեմբերի » «Սիրկաի» » Բօչէլ

և այդպէս երկու շաբաթը մի անգամ։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնից զիջումով։

Տեղեկութիւնների համար բեռների և ճանապարհորդների մեծ թոզ բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում Ջի ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբէրեժնայա, Թիֆլիսում՝ պ. Վիկտոր Դ'Արնօին Մին փողոց, գեներ. Տէր Ստեփանեանի նախկին տունը։ 10—9

ՎԱՐԳՈՒ ՏՐՈՒՄ ԵՆ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

4 սենեակից և 3 սենեակից բաղկացած, նոր զարդարած, իբենց խոհանոցներով, նկուղներով և բոլոր պարագաներով, Դէորգ Եւան գուլեանցի տանը, Փաքը-Բէթխալինսկայ փողոց (Քարափի թաղում)։ Պայմանների մասին հարցնել նոյն տանը՝ տիկին Նատալիային։

(82) 3—3

ԾԽԱԽՈՒՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ



ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ն. Ի. ՌՈՁԱՐՋԵՆՑԻ

Առաջարկում եմ պ.պ. սիրողներին լաւ ծխախոտ և պապիրոս իմ գործարանից, ուր պահեստում կայ թէ բրքական և տեղական արդիւնաբերութեան գերազանց յատկութեան թարմ ծխախոտ։ Պատուէրները կատարւում են ճշդութեամբ և գործածողների ճաշակի համեմատ։ Մազազինում կայ ծխախոտ գործածելու ամենալաւ գործիներ և նիւթեր։ Գործարանի գլխաւոր խանութը գտնւում է Վլօրցովայա փողոցում, ազնուականների հողային բանկի (նախկին Սրբոյեանոյ) տանը։

X—42

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го Октября 1890 г. Կաւկազ լրագրի գրասենեակի Տպարան Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д Читахова